Information Technologies in Finance

«ԱՅԹԻԷՖ» ՍՊԸ ԴՐԱՄԱԿԱՆ (ՓՈՂԱՅԻՆ) ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԻՆՏԵՐՆԵՏ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ (ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐՈՎ) ԱՆԿԱՆԽԻԿ ԵՂԱՆԱԿՈՎ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ 1/280

ք. Երևան “23” հունվար 2024 թ.

1. «ԱՅԹԻԷՖ» ՍՊԸ (դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող) վճարահաշվարկային կազմակերպությունը (այսուհետ՝ «Կատարող») համաձայն գործընկեր կազմակերպությունների (այսուհետ՝ «Պատվիրատու») հետ կնքված «Ինտերնետ միջավայրում (վճարային քարտերով) անկանխիկ եղանակով վճարումների հավաքագրման վճարահաշվարկային ծառայությունների մատուցման մասին հանձնարարության» պայմանագրի, որպես՝ «Կատարողը» պարտավորվում է Պատվիրատուի» հաճախորդների կողմից ինտերնետ միջավայրում (վճարային քարտերով, ներառյալ՝ վիրտուալ քարտերով) «Պատվիրատուից» անկանխիկ եղանակով ձեռք բերված ապրանքների կամ մատուցված ծառայություններ համար կատարված վճարումների հավաքագրման և «Պատվիրատուի» հաճախորդներից անկանխիկ եղանակով հավաքագրված այդ դրամական միջոցները «Պատվիրատուի» բանկային հաշվին փոխանցման վճարահաշվարկային ծառայության մատուցում:

2. Ինտերներտ միջավայրում (վճարային քարտերով) անկանխիկ եղանակով գործընկեր կազմակերպության հաճախորդների վճարումների հավաքագրման վճարահաշվարկային ծառայության մատուցման միջնորդավճարը սահմանվում է գործընկերոջ հետ կնքված Պայմանագրով

3. Գործընկերոջ հետ կնքվող Պայմանագրի շրջանակներում և դրա հիման վրա բոլոր հաշվարկները և վճարումները, համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի պահանջների, կատարվում են միայն ՀՀ դրամով:

4. Յուրաքանչյուր գործարքից հետո «Պատվիրատուն» պարտավոր է քարտապանի համար ձևավորել էլեկտրոնային գործարքի էլեկտրոնային փաստաթուղթը (էլեկտրոնային ՀԴՄ կտրոնը), որը պետք է պարունակի ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտադիր տվյալները և էլեկտրոնային փաստաթուղթը (էլեկտրոնային ՀԴՄ կտրոնը) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել քարտապանին:

5. Համաձայն «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի հաճախորդի հետ հարաբերություններում «Պատվիրատուն» պարտավոր է ինքնուրույն լուծել ծագած խնդիրները:

6. «Կատարողի» կողմից ձևավորվում է (Վճարային քարտով անկանխիկ վճարման անդորագիրը), որը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրության և ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին, որ էլեկտրոնային եղանակով ուղարկվում է քարտապանի կողմից նշված էլեկտրոնային փոստին:

7. «Պատվիրատուի» վերաբերյալ տվյալները ներկայացված են սույն Կանոնների հավելված 1-ով:

8. «Պատվիրատուի» կայքի համար նվազագույն պահանջները սահմանվում են սույն Կանոնների հավելված 2-ով:

9. «Պատվիրատուի» համար սահմանվող պարտադիր պայմանները սահմանվում են սույն Կանոնների հավելված 3-ով:

10. Անկանխիկ վճարման համար ՀՀ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերի կցման պահանջները սահմանվում են սույն Կանոնների հավելված 4-ով:

11. Կանոնները սահմանվում են և կարող են միակողմանիորեն փոփոխվել «ԱՅԹԻԷՖ» ՍՊԸ (դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող) վճարահաշվարկային կազմակերպության կողմից, որը հասանելի է իր տարածքում և վճարահաշվարկային կազմակերպության ինտերնետային կայքում: Կանոններում կատարված փոփոխությունները վճարահաշվարկային կազմակերպությունը Գործընկերոջը ծանուցում է մինչև դրանց ուժի մեջ մտնելը՝ վճարահաշվարկային կազմակերպության տարածքում, ինտերնետային կայքում դրանք հասանելի դարձնելու, նաև հրապարակելու միջոցով, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպության կողմից գործընկերոջը էլեկտրոնային հաղորդակցման միջոցների և/կամ ծանուցումներ ուղարկելու համար Պայմանագրով համաձայնեցված հաղորդակցման եղանակով:

12. Ուժը կորցրած ճանաչել «ԱՅԹԻԷՖ» ՍՊԸ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպության 18.06.2021թ.-ին հաստատված թիվ 1/184 կարգադրությունը:

13. Սույն կարգադրության կատարման նկատմամբ ընդհանուր հսկողությունը դնել ֆինանսիստի վրա:

Գործադիր տնօրեն՝ Հ. Խաչատրյան

Հավելված 1

«Պատվիրատուի» վերաբերյալ տվյալները

Ընկերության անվանումը	
Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից քաղվածքը (սքանավորված պատճեն)	
Պետ. ռեգիստրի գրանցման համար	
Ընկերությունը պետք է ունենա ՀՀ ռեզիդենտություն	
Հարկ վճարող հաշվառման համարը (ՀՎՀՀ)	
Փաստացի հասցե	
Իրավաբանական հասցե	
Հաշվարկային հաշիվ	
Հեռախոս	
Կոնտակտային անձ	
Գործունեության տեսակը	
Առկայության դեպքում լիցենզիան (սքնավորված պատճեն)	
Արտացոլվող անվանումը (հայերեն/անգլերեն)	
Ինտերնետային կայքի հասցեն	
Գործարքների դիտման իրավասություն ունեցող աշխատակցի տվյալները	
Առևտրի/սպասարկման կետի լիազոր անձ	

Հավելված 2

Պատվիրատուի կայքի համար սահմանվող նվազագույն պահանջները

1. Կայքում «Մեր մասին» բաժնի առկայություն, որը կներառի գործընկեր կազմակերպության ընդհանուր նկարագիրը և գործունեության ոլորտի վերաբերյալ տեղեկություններ և այլն:

2. Հետադարձ կապ:

3. Իրական փաստացի գործունեության հասցեն և գրանցման հասցեն, հեռախոսահամարները:

4. էլեկտրոնային հասցե:

5. Վաճառվող ապարանքների/մատուցվող ծառայությունների իրական գներ արտահայտված ՀՀ դրամով (գնանշումը ՀՀ դրամով պարտադիր է) պահպանելով «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի պահանջները:

6. Քարտապանի գումարների վերադարձի քաղաքականությունը:

7. Առաքման պայմանները:

8. Հղումները պետք է լինեն իրական և պարունակեն իրական տվյալներ:

9. Գործընկեր կազմակերպությունը պետք է լինի ՀՀ ռեզիդենտ:

10. Արգելվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ապարանքների/ծառայությունների վաճառք/մատուցում (մոլախաղեր, թմրանյութեր, զենք և այլն):

Հավելված 3

Պատվիրատուի համար սահմանվող պարտադիր պայմանները

1. «Պատվիրատուն» հանձնարարում է «Կատարողին» սպասարկման Պայմանների ներքո տրամադրվող ծառայությունների հետ կապված՝ ծանուցումները, նյութերը/փաստաթղթերը, Պայմանների փոփոխման մասին տեղեկատվությունը, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ տեղեկատվություն (այսուհետ՝ առանձին-առանձին կամ բոլորը միասին՝ ծանուցում) «Պատվիրատուին» տրամադրել վերջինիս կողմից «Կատարողին» տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին: Նշված էլեկտրոնային հաղորդակցման միջոցների բացակայության (հասցեներին Կատարողի կողմից չտիրապետելու) դեպքում «Կատարողը» կարող է հնարավորության դեպքում ծանուցումն ուղարկել «Պատվիրատուի» տրամադրած հեռախոսահամարին SMS հաղորդագրության միջոցով: Ընդ որում, մեկ եղանակով ծանուցումն ուղարկելու դեպքում «Կատարողը» պարտավոր չէ ծանուցում իրականացնել նաև այլ եղանակ(ներ)ով՝ անկախ այն հանգամանքից «Պատվիրատուն» ծանուցումը ստացել է, թե՝ ոչ:

2. Ծանուցումը «Կատարողի» կողմից ուղարկվելու դեպքում «Պատվիրատուն» համարվում է պատշաճ ծանուցված՝ անկախ այն հանգամանքից, թե վերջինս փաստացի երբ է ստանում այն: Ծանուցումը «Կատարողի կողմից առձեռն հանձնվելու պարագայում «Պատվիրատուն համարվում է պատշաճ ծանուցված՝ հրաժարվելով Պայմաններով սահմանված որևէ եղանակով լրացուցիչ ծանուցվելուց:

3. «Պատվիրատուն» պարտավոր է «Կատարողի» հետ համաձայնեցված եղանակով կառուցել և շահագործել իր ինտերնետային կայքի՝ քարտերով վճարումներ ընդունելու համար օգտագործվող մասը:

4. «Պատվիրատուն» կրում է իր ինտերնետային կայքի կառուցման և շահագործման հետ կապված բոլոր ծախսերը:

5. «Պատվիրատուն» քարտերով վճարումները պարտավորվում է ընդունել միայն «Կատարողի» և «Կատարողին» սպասարկող բանկի կողմից ներկայացված պահանջներին համապատասխան եղանակով:

6. «Պատվիրատուն» պարտավոր է պահպանել քարտերով կատարված գործարքների մասին մանրամասն տեղեկատվությունը (էլեկտրոնային ՀԴՄ կտրոնները և այլ հիմնավորող փաստաթղթերը) 3/երեք/ տարվա ընթացքում՝ սկսած գործարքի կատարման օրվանից, և «Կատարողի» առաջին իսկ պահանջով 3 /երեք/ բանկային օրվա ընթացքում տրամադրել դրանք «Կատարողին»:

7. Եթե «Պատվիրատուն» իրականացնում է ապրանքների վաճառք՝ առաքման միջոցով կամ ապրանքը «Պատվիրատուի» տարածքից ստանալու (in-store pick up) տարբերակով, գործարքի հիմնավորող փաստաթուղթը պետք է կազմված լինի հայերեն և առնվազն մեկ օտար լեզվով (անգլերեն) և պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝

- Ապրանքի նկարագրություն,
- Ապրանքի առաքման / ստացման հասցե,
- Ապրանքի առաքման/ստացման ամսաթիվ, ժամ,
- Ստացողի անուն, ազգանուն,
- Ստացողի ստորագրություն,
- Բանկային քարտի համարի վերջին 4 նիշը, որով իրականացվել է ապրանքի դիմաց վճարումը:

8. Եթե վճարողը և ստացողը տարբեր անձինք են, խնդրահարույց գործարքների, այդ թվում՝ հետագայում երրորդ անձի կողմից «Կատարողին գումարի վերադարձման պահանջ ներկայացվելու դեպքում, բացի սույն կետում նշված տեղեկատվությունից, անհրաժեշտ է նաև վճարողի ծանուցումը կամ վերջինիս հետ հաղորդակցության հիմքերը, որով նա «Պատվիրատուին» հայտնում է, թե ով է ստանալու ապրանքը և/կամ տրամադրում է այդ անձի տվյալները:

9. «Կատարողի» և քարտապանի այն բանկային գաղտնիքը, որը հասու է դարձել «Պատվիրատուին» Պայմանների համաձայն քարտով վճարումներ ընդունելու ընթացքում, ենթակա է պահպանման և ենթակա չէ բացահայտման «Պատվիրատուի կողմից:

10. «Պատվիրատուն» իրավասու չէ առանց «Կատարողի» գրավոր համաձայնության ձևափոխել և տրամադրել երրորդ անձանց «Կատարողի կողմից տրամադրված համակարգչային ծրագրերը, նորմատիվ փաստաթղթերը և այլ նյութերը:

11. «Պատվիրատուն» իր ինտերնետային կայքի խափանման դեպքերում անմիջապես տեղեկացնում է «Կատարողին այդ մասին և անմիջապես կասեցնում է քարտերի սպասարկման գործընթացը մինչև «Կատարողի» կողմից լրացուցիչ հրահանգի ստացումը:

12.«Պատվիրատուն» քարտերով կասկածելի գործարքների հայտնաբերման դեպքում՝ անմիջապես հայտնում է այդ մասին «Կատարողին:

13.«Պատվիրատուն» քարտերով վճարվող գործարքների դեպքում չի կարող Քարտապանից գանձել հավելավճարներ և/կամ կիրառել այլ վճարման եղանակների համար սահմանված սակագները և պայմանները:

14.«Պատվիրատուն» իրավասու չէ տրամադրել քարտապաններին կանխիկ գումար՝ կատարված անկանխիկ գործարքների դիմաց: Քարտերով կատարված գործարքը անվավեր ճանաչվելու/չեղարկվելու դեպքում գործարքի գումարը վերադարձվում է քարտապանին անկանխիկ եղանակով:

15.«Պատվիրատուն» պարտավոր է Պայմանագրի լուծման պահից 6 /վեց/ ամսվա ընթացքում նախքան Պայմանագրի լուծումը՝ Պայմանների էական խախտման հետևանքով «Կատարողին» պատճառված հիմնավորված վնասի կամ ֆինանսական կորստի հիմնավորված ամբողջ գումարի չափով փոխհատուցել «Կատարողին», ինչպես նաև վճարել նշված խախտումը վերացնելու համար «Կատարողի կողմից կատարված այլ ծախսերը:

16. «Պատվիրատուն» պարտավոր է «Կատարողին» ներկայացնել կայքի միջոցով վաճառվող ապրանքների և/կամ մատուցվող ծառայությունների վերաբերյալ «Կատարողի» կողմից պահանջվող անհրաժեշտ տեղեկատվությունը:

17.«Պատվիրատուն» պարտավոր է նախապես գրավոր, «Կատարողի» համակարգի միջոցով կամ Կատարողի info@itfllc.am էլ. փոստին նամակով (նամակի թեմայի դաշտում պարտադիր նշելով «vPos» բառը և «Պատվիրատուի» ինտերնետային կայքի անվանումը) տեղեկացնել «Կատարողին» գործունեության ոլորտի կամ ինտերնետային կայքի հասցեի փոփոխության մասին՝ ոչ ուշ քան փոփոխությունը ուժի մեջ մտնելուց 10 /տաս/ աշխատանքային օր առաջ:

18. «Պատվիրատուն» կրում է ամբողջ ծավալով գործարքների անվավեր ճանաչման, հետվճարների և քարտի համարի ամրակցման ֆունկցիաների հետ կապված բոլոր ռիսկերը և դրանցից բխող բոլոր տեսակի, այդ թվում նաև ֆինանսական հետևանքները/պարտավորությունները կատարված գործարքների համար:

19. «Կատարողն» իրավասու է փոփոխել միջնորդավճարի չափը՝ այդ մասին առնվազն 35 /երեսուն հինգ/ օրացուցային օր առաջ գրավոր տեղեկացնելով «Պատվիրատուին:

20. «Կատարողը» որևէ պատասխանատվություն չի կրում՝

- Պայմանների խախտումով կատարված գործարքների համար,
- Ապօրինաբար գործածվող քարտերով կամ քարտային հաշվի տվյալներով կատարված գործարքների համար,
- Ինտերնետային կայքի խափանման պատճառով վճարումների սպասարկման անհնարինության համար:

Հավելված 4

Անկանխիկ վճարման համար ՀՀ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերի կցման պահանջները

Վճարային համակարգերի քարտեր	☑ VISA ☑ MasterCard ☑ ArCa ☑ MIR
Լրացուցիչ ֆունկցիաներ	☑ Երկկողմանի 3D Secure ☑ Գործարքի չեղարկում՝ առավելագույնը 12 ժամվա ընթացքում[1] ☑ Քարտապանի հաշվից Անկանխիկ գումարի ելքագրում Միանգամից վճարում ☑ Նախահավաստագրում/հաստատում ☑ Երկփուլանի վճարման համակարգ [2]

[1] Առավելագույնը 12 ժամվա ընթացքում գործարքի չեղարկման համար որևէ միջնորդավճար չի գանձվում պատվիրատուից:

[2] Քարտի վրա գումարի սառեցումը տեղի է ունենում մինչև 30 օրացուցային օր, որից հետո Պատվիրատուի կողմից գործարքի հաստատման հանձնարարական չտալու դեպքում Քարտապանի գումարն ապասառեցվում է: